


թիւնն արդէն ստացուած է և նպաստաւոր եղանակներ լինելուն պէս՝ սկսուելու են ընդարձակ պեղումներ, որոնք անշուշտ չափազանց հետաքրքիր պէտք է լինին՝ բանալով մեր առաջ դարերի ընթացքում հողի տակ թաղուած բազմաթիւ յիշատակարաններ:

Դեկտեմբերի 4-ին ս. ս. Թադէոս և Բարդուղիմէոս առաքելոց տօնին Վեհափառ Հայրապետի հրամանով ս. Գայանէի վանքում արեղայ ձեռնադրուեցին Ներսէս սարկաւազ Տէր Միքայէլեանը և փիլիսոփայութեան դօքտոր և Աստուածաբանութեան լիցենցեանտ Երուանդ սարկաւազ Տէր Մինասեանը:

Մայր Աթոռս վերադարձաւ Կարսի վիճակի փոխանորդ Կիւրեղ վարդապետ Կիւրեղեանը, որը թողեց յիշեալ վիճակի փոխանորդութիւնը:

Տ. Արտակ վարդապետը նշանակուեց Նոր-Բայազիդի գործակալ:



ԱՅԼ ԵԿԵՂԵՑԻՆԵՐ

ՊՐԱԽՈՍԼԱԽ ԵԿԵՂԵՑԻ ՌՈՒՍԸՅ

«Церк. Вѣстник»-ի 44 համարում կարդում ենք.

Վերջին ժամանակներս ոչ միայն աշխարհական մամուլը, այլև մեր թեմական լրագիրները բաւականին տոկուն և միաբան քննում են այն երևոյթը, որ մեր հոգևոր դպրոցների սաների մէջ հետզհետէ թուլանում է հովուական պաշտօնավարութեան վերաբերեալ դադարաւորական ոգևորութիւնն ու սէրը:

Այդ երևոյթը ուշադրութեան արժանի է մանաւանդ նրանով, որ նա տեղի ունի միջնակարգ դպրոցների ծրագրի բարեփոխութեան վերաբերութեամբ տեղի ունեցող եռանդուն խորհրդածութիւնների միջոցին:

Եթէ մենք ամեն կողմից արտունջներ ենք լսում աշխատական դպրոցների մասին, (թէ ընտանիքի և դպրոցի մէջ գոյութիւն ունի ինչ որ «միջնակարգ», արդեօք նոյնը տեղի չունի՞ նաև ընտանիքի և հոգևոր դպրոցի մէջ: Այնքան է, որ հոգևոր դպրոցներն էլ շատ ծաղկած վիճակ չունին, երբ որ նրանց դատաւարտում են ոչ թէ միայն դպրոցական վարչութիւնները, այլև հոգևորականութեան լաւագոյն ներկայացուցիչները: Հոգևոր դպրոցների սաներին մեղադրում են, որ նրանց մէջ թուլացել է սէրը դէպի եկեղեցին և հովուական պաշտօնավարութիւնը, այսինքն հէնց այն բանի համար, ինչ որ պէտք է տար նրանց հոգևոր դպրոցը:

Դպրոցական վարչութիւններն, ինչպէս այդ ցոյց է տալիս Օրէնքաւարդի դպրանոցի վարչութեան փորձը, իրենց անցօր համարելով ներշնչել սաներին «հովուական ոգի», դիմում են ծնողների կրթիչ ազդեցութեան իրենց դաւանների վրայ:

Այսպիսով պարզ է, որ վերոյիշեալ երևոյթի պատճառ են համարւում դպրոցն ու ծնողները:

Ինչո՞ւմն է դպրոցի մեղաւորութիւնը: Հոգևոր դպրոցն այս դէպքում մեղաւոր է նրանով, որ նա աշխատում է բռնի կերպով խլացնել և ոչնչացնել սաների ժամանակակից գրականութեան գաղափարների հետ ծանօթանալու բնական ծարաւը և տքնում չափազանց արհեստական կերպով պատուաստել հովուական պաշտօնավարութեան և եկեղեցու սէրը: Հոգևոր դպրոցի ամբողջ կազմակերպութիւնը, դիտութիւնների ծրագիրը, որտեղ գերիշխող դեր ունին աստուածաբանական աւարկանքը, սաների հոգևոր հայեացքից ծածկում են դիտութեան և կեանքի այն ընդարձակ շրջանը, որին ձգտելը աւելի քան բնական է պատանեկական հասակում: Աւ ինչքան էլ խլացնեն այդ բնական ձգտումը, վերջիվերջոյ նա դպրանոցաւարտին մղում է դէպի կեանքն ու ժամանակակից գաղաքակրթութիւն տարածող հիմնարկութիւնները: Ահա այս է պատճառը, որ մեր օրով դպրանոցների սաների մեծ մասը փախչում է՝ ամենալաւերը դէպի բարձրագոյն դպրոցներ, միջակները՝ դէպի քաղաքացիական ծառայութիւն: Առաջինները գնում են դիտութեան և կեանքի, իսկ վերջինները կեանքի վայելքների ետեւից. մնացածներն էլ իրենց ամբողջ կեանքի

ընթացքում մաքառում են դպանոցներում ձեռք բերած ծա-
րաւի դէմ և մի մի միայն անդուծ իրականութիւնը երբեմն
ընկճում է նրանց:

Հոգևոր դպրոցների սաների ծնողաց յանցանքը կայանում
է նրանում, որ նրանք չեն կարողանում արմատացնել իրենց
կեանքի եղանակով բարի հովուի իդէալը և շօշափելի կերպով
ցոյց տալ իրենց զաւակներին հովուական պաշտօնավարութեան
վսեմութիւնը և նրա հետ կապուած հոգևոր առաւելութիւն-
ները՝ քան աշխարհականինը: Ի՞նչ ինչո՞ւ չեն կարող, այդ-
մեր հոգևորականութեան ամբողջ կեանքի խնդիրն է: Այդ
կեանքը խելամուտ գիտողին իդէալի և կեանքի այնպիսի հակա-
սութիւններ է տալիս, որ մի միայն կամքի տէր և կոչումն ու-
նեցող մարդիկ կարող են արժանաւոր հովիւներ լինել:

Հոգևոր դպրոցները սաներն ու հովիւները ամենից առաջ
իրենց ժամանակի ծնունդն են և այդ պատճառով էլ մարմնաց-
նում՝ կրում են իրենց մէջ ժամանակի թէ լաւ և թէ հիւան-
դոտ սաղմերը: Իսկ իւր ժամանակի ոգուն չենթարկուող ու
չբութււլացող հովիւն Աստուածային շնորհաց ծնունդ է: Հետեա-
պէս և հոգեկան թուլութիւնը կարելի է բուժել մի միայն ձեռ-
նադրութեան շնորհիւ, որ լցուցանում է շնորհօր ձեռնադրուող
հովիւներին, ինչպէս այդ տեսնում ենք մեր ծեր և իրօք եկե-
ղեցական արժանաւոր հայրերի վրայ:

Ինչ կը վերաբերի դպրանոցի սաների կրօնական թուլու-
թեան, նրա առաջը կառնուի մի միայն այն դէպքում, երբ մեր
հոգևոր դպրանոցները կը դառնան հանրակրթական ուսումնա-
րաններ և առտուածարանական դասընթացները կը պահուին
մի միայն հովուի կոչումն զգացողների և արժանաւորագոյնների
համար: Իսկ քանի որ այդ այդպէս չի եղել, այդ երևոյթի
առաջն առնելու բոլոր վարչական և պատժական միջոցները
զուր են և երբէք նպատակին չեն հասնիլ:

— Յայտնի է, որ նոյն երևոյթը զանազան չափերով նկատ-
ուել և նկատուում է նաև մեր մէջ. մեզ մօտ էլ հոգևոր դպրոց-
ների սաները շատ անգամ յիսկառու են տալիս հովուական
առարկիւղից և դիմում այլ և այլ ոլարապմունքների, սակայն
որոնք են դրա գլխաւոր շարժառիթները, կաշխատենք պարզել
հետեւեալ անգամ:

Նոյն թերթի № 45-ում կարդում ենք. մարդ տխուր
տպաւորութիւն է ստանում երբ կարդում է այն անկարգու-
թիւնների մասին, որ դործել են պահեստի կանչուած զինուոր-

ները մի քանի գաւառներում՝ գլխաւորապէս Մօզիլեօլի, Վիտերսի և Կիւի նահանգներում: Մի դէպքում հարկադրուած են եղել զէնքի զիմելու և եղել են սպանութեան և վիրաւորութեան: Անկարգութիւնների աղբիւրը որոշ չափով պարզուած է: Առաջին տեղն է բռնում պահեստի զինուորների ճնշուած տրամադրութիւնը, որն առաջ է եկել նրանց՝ իրենց սովորական կենցաղավարութիւնից, ծնողներից և մերձաւորներից բաժանուելու պատճառով, որոնք այդ բոլորի հետ միասին կարողացել են տեսնել, թէ ինչպէս գործի ամբողջ գոռաւորութիւնը ծանրանում է գլխաւորապէս խեղճ մարդկանց միայ, մինչդեռ հարուստները մի կերպ աղատուած են, իսկ ճարպիկ հրէաները նոյն իսկ չեն մասնակցում: Ապա մեղքի մեծ մասը ծանրանում է ստիկիանութեան և զինուորական վարիչների միայ, որոնք չեն կարողանում ժամանակին կարգադրել ինչ որ պէտքն է, որոնք և պարտաւոր են հոգալ նրանց ուտեստը, բնակարանը և կանոնաւորել նրանց փոխադրութեան գործը, մանաւանդ հաստատեն հէնց սկզբից կանոնաւոր կարգապահութիւն: Չափազանց վճռական նշանակութիւն է ունեցել օդին, որ Ռուսաստանի ամենալուսանդաւոր թշնամին է և անփոփոխ ուղեկից ամենայն անկարգութիւնների, անօրէնութիւնների, բռնութեան և աւերի: Պահեստի զինուորներն իրենց պարտք են համարել մնաւ բարեաւին կոնծել՝ կրկնապատիկ արժէք վճարելով այն վաճառականներին, որոնք օգտուել են արքունական օղեւաճառանոցների փակումից զինուորների գալստեան միջոցին և ահա հարեւո՞ր վիճակումն էլ կատարել են իրնց վայրագութիւնները: Ահա այսպէս՝ այստեղ էլ երևան եկաւ ռուսական հարեցութեան դաւաւոր ախար իւր ամբողջ աննախանձելի մերկութեամբ, որի դէմ մաքառելը մենք բոլորս անհրաժեշտ ենք գտնում:

Այդ առթիւ „Новое Время“ն գրում է. իւրաքանչիւր քաղաքիսում ստիպուած համոզուած են, որ չի կարելի հաշտուել հայրենի հարեցութեան և դրա համար ամենայն ինչ վատնելու սովորութեան հետ: Ժամանակ է, ժամանակ, որ միջոցների զիմենք իրկելու մեր թուլահամ հայրենակիցներին օգու առաջ բերած թմրութիւնից: Օգու համար և օգու պատճառաւ ո՞րքան բռնութիւն և այլանդակութիւն է կատարուած Ռուսաստանում: Սարսափելի բան է: Հրամանադրելով հարեցութիւն վերացնել չի կարելի: Այս սոսկալի թշնամու դէմ մաքառելու համար հարկաւոր է պետութեան և հասարակութեան փոխադարձ աջակցութիւնը: Առաջինը պարտաւոր է

գանձարան լցնելու այլ միջոցներ գտնել, իսկ միևսի վրայ ծանրանում է բարոյական պարտականութիւն զգաստութեան ուժեղ և անկեղծ քարոզ սկսելու: Մի միայն հասարակական զօրեղ շարժումը կարող է մահացու վճիռ ստորագրել օղու դէմ: որն անկարգութեանց գլխաւոր գրգռիչն է:

Խօսելով պետութեան և հասարակութեան համերաշխ գործունէութեան մասին, յօդուածագիրը լրութեան է տալիս եկեղեցու ազդեցութիւնը, գուցէ այն պատճառով, որ հոգեւորականութիւնը ցայսօր շատ քիչ բան է արել հարբեցութիւնն արմատախիլ անելու համար: Բայց այստեղ կարելի է հարց տալ, թէ արդեօք հոգեւորականութիւնը ինքն է մեղաւոր, որ այս խնդրում բան չի արել և թէ արդեօք նա ուրիշ պայմաններում չէր կարող աւելի գործ կատարել: Մենք այստեղ առաջ կը բերենք Ա. Պետ. Վեդոմոստի մէջ տպուած բժշկի նամակից հետեւալ մի քանի տողերը. —

«Գիւղական քահանաների թւում կան այնպիսի բարձր անձնաւորութիւններ՝ քաղաքական և եկեղեցական այնպիսի լայն աշխարհայեցողութեամբ, որ նրանց գաղափարազուրկ կեանքն ու մի քանի անպէտք թղթեր գրոտելը մեր կեանքի համար ամենալինստակար թիւրիմացութիւնն է: Սակայն երեւակայեցէք դուք մի ողեւորուած և գաղափարական քահանայ գիւղական համայնքում, արձակեցէք նրա ձեռքի կապանքներն ազատ գործի համար, թոյլ տուէք նրան լինել ծխականների հայր և ոչ թէ իւր գործակալի քարտուղար. նախաձեռնութեան իրաւունք տուէք: Այո՛, նա երկու տարուայ ընթացքում կը կարողանայ համայնքի վճռով փակել գինեւորները գիւղում, կը զգաստացնի ժողովրդին, կընաւելացնի նրան ներքին ճշմարտութեան, ինքնիշխան կը դարձնի, կը կազմակերպի հասարակական ինքնօգնութիւն և այլն և այլն: Հաւատացէք, որ ես վրոճով եմ խօսում: Ես ճանաչում եմ մէկ քահանայի, որ մի գաղափարական կալուածատիրուհու հետ միասին հիմնել են իրենց ընտանեկան բանկը, նրանք գնել են անասուններ ձիազուրկ գիւղացիներին համար, անբասիւր վարք ունեցողներին օգնել են ամեն ժամանակ և ամեն տեսակ կարիք ունեցած դէպքում, և այս բոլորի միակ պայմանն է եղել համայնքի՝ համագիւղացիների աչքում անբասիւր վարքը: Այսպիսով նրանք հասել են զարմանալի, նոյն իսկ անհաւատալի հետեւանքների՝ այդ ծխի նիւթական բարեկեցութեան և բարոյական յառաջադիմութեան տեսակէտից:

—Որ քահանան մեծ գործ կարող է անել իւր ծխականների նիւթական և բարոյական բարեւարութեան համար, դրա-

նույն ոչ մի կատկած չկայ: Դրա համար հորհուր է, որ քահանան կօնօելու սովորութիւնից աղատ լինի և խմբիների վրայ նայի որպէս թոյնի վրայ: Իսկ ինչ կը վերաբերի այն մեղադրանքին, որ իբրև թէ հրէաները խոյս են տալիս ամեն բանից և գործի ամբողջ ծանրութիւնն ընկնում է աղքատ ժողովրդի վրայ, թող ներուի մեղ ասել, որ Перк. Вѣстникъ թերթի խմբադրութիւնը գեռ չի աղատուել հին հիւանդութիւնից և մեր տգիտութեան ու հարեցութեան պատճառով առաջ եկած տխուր երևոյթները բացատրում է դատապարտելի ձևով: մանաւանդ որ հէնց ռուսական մամուլը միաբերան վիայում է, թէ ինչ անձնուրաց կերպով են գործում թէ հրէայ և թէ քրիստոնէայ ընդ աղգերի ղինուորներն ու բժիշկները հեռաւոր Աերւելլում: Իսկ նիւթական ծախսերից էլ, ինչպէս գիտենք, ոչ ոք աղատ չէ և չի կարող լինել, որովհետև դրա համար կայ օրէնք, որը երբէք ղիջում չի անում ոչ ոքին՝ նամանական հրէաներին:

Հոգեւոր դպրոցներից շատերի սաները գիմնէին շրջանական հոգաբարձուներին և իրաւունք խնդրել համալսարան մը տնեւու: Վերջիններս այդ խնդիրներն ուղարկել էին ս. Սինօփի Օբեր պրօփուրօր Պրէզիդենտօսին, որը ինչպէս հաղորդում են մայրաքաղաքի թերթերը, քննելով յիշեալ միջնորդութիւնները, տուել է բացատրական եղբակացութիւն:

Աստուածաբանական „Православный Путеводитель“ թերթի նոյնմբերի համարի 600 երեսին կարդում ենք.

„Հնածէսները (старобрядцы) համեմատում են այն, ինչ որ գոյութիւն ունի պրաօղաւների և իրենց մէջ: Ահա այդ համեմատութիւնը.

1) Մենք հնածէսներն յունական եկեղեցու նման կաղմում ենք եկեղեցու մարմինը:

2) Մեր և մեր հովիւների մէջ գոյութիւն ունի կատարեալ համերաշխութիւն և միութիւն: Մեր քահանաներն ապրում են ժողովրդի հետ և ժողովրդի համար:

3) Մենք ենք ընտրում մեր հովիւներին բարեպաշտ ժողովրդից, ինչպէս այդ անում են յոյները:

4) Մենք ենք պահում մեր հովիւներին առանց դանձաբանի կողմից որ և է նպատակ:

5) Եկեղեցու եկամուտները, որպէս աղքատների կայք, մենք ծախսում ենք բարեգործութեան համար:

6) Մեր եպիսկոպոսները ճանաչում են իրենց հօտը, ինչպէս և հօտը գիտէ իւր եպիսկոպոսներին:

Այժմս գիմենք իշխող եկեղեցուն:

1. Այնտեղ ոչ թէ եկեղեցական գործերում բոլոր իրաւունքներից զուրկ ժողովուրդը, այլ հոգեւորականութիւնն է եկեղեցի համարւում:

2. Եկեղեցու և հովիւների մէջ գոյութիւն ունի կատարելապէս անջատ կացութիւն և հոգեւորականութիւնն ապրում է մի միայն իրեն համար, որովհետեւ պետութեան կողմից բոլորովին ասպահովուած է և ծխականներին երեւում է միայն այն ժամանակ, երբ, ինչպէս նկատել է Ուսպենսկի Պօրփիւրիոս եպիսկոպոսը, նրան հարկաւոր է «բուրվառ, մշտիկ, ձէթ և գերեզմանի բահը»: Ծխականներն անտարբերութեամբ ընդունում են նրանց քահանայական դասակարգից, մինչդեռ նրանց պապականութիւններն իրենց յայտնի են:

3. Եկեղեցու հովիւները նշանակւում են եպիսկոպոսներից՝ հակառակ ծխականների կամքի ու ցանկութեան շատ անգամ ոչ միայն պախարակելի վարույց տէր, այլ և անհաւատ անձերից:

4. Տիրող եկեղեցու հոգեւորականութեանը շատ անգամ ժողովուրդը մերժում է նիւթական ապրուստ, որի համար և պետութիւնն է նրան պահում:

5) Եկեղեցական տների և հողերի եկամուտները ոչ թէ բարեգործութեան և ծխի հիւանդների պահպանութեան համար է գործադրւում, այլ հոգեւորականների և հոգեւոր իշխանութեան վրայ:

6) Տիրող եկեղեցու եպիսկոպոսները չեն ճանաչում իրենց հօտը, որպէս և վերջինս չի ճանաչում նրան: Նրա եպիսկոպոսներն ապրում են գանձարանից ստացուող ռոճկով և վանքերի եկամուտներով, որոնց և վարդապետ են համարւում հակառակ ս. կանոնների: Վերջիշեալ յօդուածի առթիւ ս. Պետերը. Վեդոմոստի թերթը նկատում է.—

Վերջապէս մեզ մօտ էլ կրօնական թերթերը սկսան խօսել կենդանի լեզուով և դադարեցին մեզ քնացնել մեր «միասնօրէութեան» յաջողութիւններով, որի կազմը անընդհատ աճում էր: Ապագայում մեզ առաւել կարեւոր է գիտենալ եկեղեցուց հեռացողներին, քան պրաւօսլաւութեան դարձողների թիւը: Գառն ճշմարտութիւնն առաւել օգտակար է, քան քաղցր սուտը:

և լռութիւնը, և ստեղծ այսպիսի ճշմարտութիւնն առաւել աղնիւ և հայրենասէր գործ է, քան լռութիւնը:

Ուշադրութիւն դարձրէք մեր հնածէսների (старообрядцы) կազմած այդ վեց համեմատական կէտերի վրայ: Զէ՞ որ մեր ամբողջ բանակութիւնը, անվերջ վիճաբանութիւնները, խօսակցութիւնը, քարոզչական (միսսիօնարական) ամբողջ շէնքը, որ հիմնուած էր միմիայն վիճաբանութեան վրայ, խորտակուած է հիմբից: Ընտապաշտը հարցնում է. «դուք ցանկանո՞ւմ էք, որ ես միանամ ձեզ հետ: Ես պատրաստ եմ միանալ, եթէ կապացուցանէք ձեր համայնքի կանոնակոնութիւնը. այն ի՞նչ՝ կարգացէք մեր համեմատութիւնը»:

Այնուհետև լրագիրը գտնում է, որ պէտք է միսսիօնարական գործը հիմնիվեր բարեփոխել, կենդանացնել. այլապէս նա աղանդաւորների հետ յաջողութիւն չի ունենալ: Այս առթիւ եկեղեցական համալուարները իւր № 46 ում նկատում է «համալուար գիրք պահանջում է, որ մեր հնապաշտներին աղատութիւն տրուի և իրաւունք՝ սեփական թերթ ունենալու. սակայն կասկած չկայ, որ այսպիսի իրաւունք տալով նրանց, իսկ մեր կրօնական մամուլի վերաբերութեամբ թողնելով նախկին դրութիւնը, մենք ահագին առաւելութիւններ տուած կլինէինք հնապաշտներին՝ քան թէ պրաւօսլաւներին: Նախ կրօնական մամուլի համար պէտք է ստեղծել գոյութեան աւելի նպաստաւոր պայմաններ և հնարաւորութիւն տալ նրան ազատ դարգանալու և այնուհետև ապա վտանգաւոր չեն լինիլ հնապաշտների և աղանդաւորների մեքենայութիւնները»:

— Ազատ թողէք իւրաքանչիւրին աղատօրէն պաշտելու իւր Արարչին և աշխատեցէք նրա կեանքը մօտեցնել Աւետարանի պահանջներին. ահա գլխաւորը: Ժամանակ է, որ ծէսը ստանայ ծիօնի նշանակութիւն և հաւատացողները զբաղուեն Աւետարանի պահանջած գործով ու կենցաղաւարութեամբ: Քանի որ չի ստեղծուել մեր կեանքի և հաւատոյ համերաշխութիւնը, մենք միմիայն Աւետարանի վարկեցիների նման կլինինք և ոչ Քրիստոսի աշակերտներ և նրա հիմնած եկեղեցու ղաւախներ:

Անգլիական (եպիսկոպոսական) եկեղեցի

Անգլիական եկեղեցու կեանքում նշանաւոր տեղ են բռնում իւրաքանչիւր տարի գումարուող եկեղեցական համաժողովները, որտեղ հաւաքւում և ներկայ են լինում եկեղեցական